

**«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**Ֆինանսական Հաշվետվություններ և  
Անկախ Աուդիտորական Եզրակացություն**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ  
հաշվեփակված տարվա

**ԵՐԵՎԱՆ  
Հունիս 2026թ.**

## Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

## ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

### «ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ղեկավարությանը

#### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ «Համալսարան») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ նույն ամսաթվին ավարտվող տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Համալսարանի ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքն ու դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

#### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Համալսարանից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

#### Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը:

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Համալսարանի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Համալսարանը լուծարելու կամ Համալսարանի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

### **Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախաազձում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախազձելու, և ոչ թե Համալսարանի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Համալսարանի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է

էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Համալսարանին դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:

- գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

01 հունիսի 2026թ.  
«ԱՌԻԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

  
Արսեն Խաչատրյան  
Տնօրեն



  
Ավետ Ավետիսյան  
Աուդիտի ղեկավար

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«ՌՈՒՄ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**  
**2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	Ծնթ.	31.12.2025թ. հազար դրամ	31.12.2024թ. հազար դրամ
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	4	3,777,946	3,796,748
Օգտագործման իրավունքով ակտիվներ	5	42,109	42,109
Ոչ նյութական ակտիվներ		10,354	9,542
Տրված կանխավճարներ		14,565	12,046
Հետաձգված հարկային ակտիվներ	6	69,313	61,892
		<b>3,914,287</b>	<b>3,922,337</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ	7	27,170	17,115
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	232,114	129,077
Շահութահարկի գծով կանխավճար	18	-	15,797
Դրամական միջոցներ	9	3,876,496	3,289,858
		<b>4,135,780</b>	<b>3,451,847</b>
		<b>8,050,067</b>	<b>7,374,184</b>
<b>ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
<b>Սեփական կապիտալ</b>			
Զուտ ակտիվներ	10	2,962,820	2,074,035
		<b>2,962,820</b>	<b>2,074,035</b>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	11	-	10,636
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	2,606,848	2,571,974
		<b>2,606,848</b>	<b>2,582,610</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	11	-	19,528
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	901,425	852,460
Եկամուտներն վերաբերող շնորհներ	12	1,394,300	1,845,551
Շահութահարկի գծով պարտավորություն	18	184,674	-
		<b>2,480,399</b>	<b>2,717,539</b>
		<b>8,050,067</b>	<b>7,374,184</b>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՌՈՒՄ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծնթ.	2025թ.	2024թ.
		հազար դրամ	հազար դրամ
Կրթական ծառայությունից եկամուտ		2,723,721	2,246,470
Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտ		2,757,729	2,098,356
Այլ եկամուտներ	14	516,591	291,033
<b>Ընդամենը հասույթ</b>		<b>5,998,041</b>	<b>4,635,858</b>
Փոխհատուցում աշխատակիցներին		(3,870,080)	(3,407,164)
Մաշվածություն		(386,450)	(376,456)
Կրթաթոշակ		(161,088)	(184,526)
Գրասենյակային, կոմունալ և հեռահաղորդակցության ծախսեր		(169,801)	(155,588)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր		(25,998)	(15,132)
Սպասարկման ծառայություն		-	(31,680)
Ստացված տարբեր ծառայություններ		(78,122)	(75,405)
Այլ ծախսեր	15	(525,334)	(458,456)
<b>Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)</b>		<b>781,168</b>	<b>(68,548)</b>
Ֆինանսական եկամուտ, զուտ	16	297,162	405,045
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)	17	19,442	(8,787)
<b>Շահույթ/(վնաս) մինչև հարկերը</b>		<b>1,097,772</b>	<b>327,710</b>
Շահութահարկի գծով ծախս	18	(207,274)	(27,468)
<b>Տարվա զուտ արդյունք</b>		<b>890,498</b>	<b>300,242</b>
Այլ համապարփակ եկամուտներ			
<b>Տարվա համապարփակ արդյունք</b>		<b>890,498</b>	<b>300,242</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Համալսարանի ղեկավարության կողմից 2026թ. մայիսի 30-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Է. Մ. Սանդոյան  
Ռեկտոր



Ս. Վ. Ալլահվերդյան  
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

**ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«ՌՈՒՄ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

	<b>Կուտակված արդյունք</b>	<b>Ընդամենը</b>
	հազար դրամ	հազար դրամ
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>	<b>1,932,558</b>	<b>1,932,558</b>
Տարվա շահույթ (վնաս)	300,242	300,242
Նախորդ տարիների սխալի ուղղում	(1,415)	(1,415)
Դուստր ընկերության ապաճանաչում	(157,350)	(157,350)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>2,074,035</b>	<b>2,074,035</b>
Տարվա շահույթ (վնաս)	890,498	890,498
Նախորդ տարիների սխալի ուղղում	(1,713)	(1,713)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>2,962,820</b>	<b>2,962,820</b>

Զույգ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«ՌՈՒՄ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

	<u>2025թ.</u> հազար դրամ	<u>2024թ.</u> հազար դրամ
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Կրթական ծառայությունից մուտքեր	2,703,239	2,223,832
Այլ եկամուտներից մուտքեր	358,121	347,746
Շնորհներից և անհատույց ստացումներից մուտքեր	2,359,029	2,021,265
Գնումների դիմաց վճարումներ	(676,778)	(575,721)
Կրթաթոշակների վճարումներ	(160,391)	(186,322)
Վճարումներ աշխատակիցներին	(2,956,064)	(2,523,101)
Շահութահարկի վճարում	(11,215)	(75,762)
Վճարումներ հարկերի և այլ վճարների գծով	(1,001,272)	(847,156)
Գործառնական այլ ելքեր	(60,523)	(42,263)
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>554,146</b>	<b>342,518</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
ՀՄ և ՈՆԱ ձեռք բերման գծով վճարումներ	(249,554)	(217,125)
Փոխառությունների տրամադրում/(մարում), զուտ	-	210
Ստացված շահաբաժիններ	-	180,674
Ստացված տոկոս	299,408	229,315
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>49,854</b>	<b>193,074</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Վարկերի և փոխառությունների մարում	(17,173)	(22,182)
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>(17,173)</b>	<b>(22,182)</b>
<b>Դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>586,827</b>	<b>513,410</b>
Փոխարժեքային տարբերություններ	(189)	(20,541)
Դրամական միջոցները տարեսկզբի դրությամբ	3,289,858	2,796,989
<b>Դրամական միջոցները տարեվերջի դրությամբ</b>	<b>3,876,496</b>	<b>3,289,858</b>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

«ՌՈՒՄ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

## **1. Ընդհանուր տեղեկություններ**

«ՌՈՒՄ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետ՝ Համալսարան) իրավաբանական անձ հանդիսացող միջպետական կազմակերպություն է, որը գրանցվել է Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրի կողմից՝ 28.07.2008թ.-ին, գրանցման համարը՝ 264.211.08329: 18.05.2026թ.-ին նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության համաձայն Համալսարանն ունի հիմնադրամի կարգավիճակ:

Համալսարանի իրավաբանական հասցեն է՝ 0051, ՀՀ, ք. Երևան, Հ. Էմին 123:

Համալսարանի համահիմնադիրներն են հանդիսանում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարությունները՝ ի դեմս ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության:

Համալսարանի գործունեության է հիմնական տեսակներն են՝

- կրթական գործունեություն՝ տարբեր մակարդակների կրթական ծրագրեր,
- հետազոտական գործունեություն՝ հետազոտությունների, փորձերի անցկացում և գիտելիքների տարածում,
- նորարարական և մեթոդական գործունեություն՝ նոր տեխնոլոգիաների ներդրում և կրթության ու գիտության մեթոդական աջակցության տրամադրում,
- միջազգային համագործակցություն՝ ինտեգրում համաշխարհային գիտական և կրթական հանրության հետ,
- հրատարակչական գործունեություն՝ մենագրությունների, հոդվածների, ժողովածուների և ամսագրերի հրատարակում,
- Մտավոր սեփականության առևտրայնացում և կառավարում՝ հետազոտությունների արդյունքների օգտագործում, մտավոր սեփականության իրավունքներից եկամուտների ստեղծում:

Համալսարանի կառավարման մարմիններն են Կառավարման խորհուրդը, Գիտական խորհուրդը և Ռեկտորը:

Համալսարանի միանձնյա գործադիր մարմինը Համալսարանի Ռեկտորն է, որն իրականացնում է Համալսարանի գործունեության անմիջական ղեկավարումը:

## **2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները**

### **2.1. Համապատասխանության մասին հայտարարություն**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ): ՖՀՄՍ-ները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից ընդունված ստանդարտները և դրանց մեկնաբանություններն են:

## 2.2. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Համալսարանի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ): Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

## 2.3. Դատողությունների, գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Սույն ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Համալսարանի ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը և պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ծանոթագրություն 18-ում:

## 3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

### 3.1. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժույթային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

#### 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	<u>31.12.2025թ.</u>	<u>31.12.2024թ.</u>
	<u>ՀՀ դրամ</u>	<u>ՀՀ դրամ</u>
1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
1 Եվրո	449.01	413.89
1 Ռուբլի	4.8711	3.71

#### Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փական փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

### 3.2. Հիմնական միջոցներ

#### Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների հոդվածները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստը:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ հիմնական միջոցը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին հոդվածներ (նշանակալի բաղադրիչ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

#### Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների հոդվածի բաղկացուցչի փոխարինման ծախսումները ճանաչվում են հոդվածի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Համալսարան և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարելուն պես:

#### Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մաշվածության ծախսումները ներառվում են այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ հիմնական միջոցը մատչելի է օգտագործման համար: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ ժամանակաշրջանի համար հետևյալն են.

Շենքեր և շինություններ	10-30 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	1-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	10 տարի
Տնտեսական գույք	3-8 տարի
Համակարգչային և հաշվողական տեխնիկա	1-5 տարի
Այլ	3-8 տարի
Գրքեր	Չմաշվող

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

### 3.3. Ոչ նյութական ակտիվներ

#### Ճանաչում և չափում

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Համալսարանի կողմից և ունեն օգտակար ծառայության ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

#### Ամորտիզացիա

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը՝ կա՛մ ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում կա՛մ 10 տարում:

### 3.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

### 3.5. Վարձակալված ակտիվներ

Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»:

#### *Համալսարանը որպես վարձակալ*

Համալսարանը վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Համալսարանի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Համալսարանը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

#### *Համալսարանը որպես վարձատու*

Որպես վարձատու Համալսարանը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

### 3.6. Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքից ու իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Պաշարների ինքնարժեքը որոշվում է ՖԻՖՈ (առաջին մուտք, առաջին ելք) մեթոդով:

### **3.7. Ֆինանսական գործիքներ**

#### Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Համալսարանը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

#### Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Համալսարանի ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում:

Համալսարանի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն թիվ 21-ում:

#### Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունը աննշան է, գեղջում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Համալսարանի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

#### Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: Հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրականարժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիան ներառում է նաև ներդրումը սեփական կապիտալում: Համալսարանը հաշվառում է ներդրումը իրականարժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և ցուցակված սեփական կապիտալի բաժնետոմսերը հաշվառել իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում: Իրական արժեքը որոշվել է ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան չափումը, որը չի թույլ տալիս սկզբնական արժեքով չափումը:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրականարժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

#### Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Համալսարանի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Համալսարանը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա: Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ (Փուլ 1) և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ (Փուլ 2):
- Փուլ 3-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները, մինչդեռ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային

կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Համալսարանը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորուստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Համալսարանը օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Համալսարանը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են ելնելով ժամկետանց օրերից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Համալսարանի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները և ածանցյալ ֆինանսական գործիքները: Համալսարանի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն թիվ 21-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

**3.8. Ծնորհներ**

Ծնորհը՝ Համալսարանին ռեսուրսների փոխանցման տեսքով պետության, կազմակերպության կամ այլ մասնավոր անձի կողմից տրամադրվող օգնություն է՝ Համալսարանի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Դրանք չեն ներառում օգնության այն ձևերը, որոնց հնարավոր չէ խելամտորեն որևէ արժեք վերագրել, ինչպես նաև պետության, կազմակերպության կամ այլ մասնավոր անձի գործարքները, որոնք հնարավոր չէ տարանջատել սովորական առևտրային գործարքներից: Ակտիվներին վերաբերող շնորհները այն շնորհներ են, որոնց հիմնական պայմանն այն է, որ Համալսարանը պետք է գնի, կառուցի կամ որևէ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ ակտիվներ: Եկամուտներին վերաբերող շնորհները՝ ակտիվներին վերաբերող շնորհներից տարբերվող պետական կամ մասնավոր շնորհներ են: Ծնորհը ստանալու ձևը չի ազդում շնորհի գծով հաշվառման մեթոդի ընտրության վրա: Այսպիսով, անկախ այն բանից՝ շնորհը ստացվել է դրամական միջոցների տեսքով, թե որպես ունեցած պարտավորության նվազեցում, այն պետք է հաշվառվի նույն եղանակով:

Շնորհը, որը հատկացվում է Համալսարանին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

### **3.9. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Համալսարանին մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Համալսարանը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

### **3.10. Շահութահարկ**

Ընթացիկ հարկն իրենից ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի (վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարը:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) պետք է չափվեն այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ: Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմնվելով հարկերի այն դրույքների վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են իրացվել չօգտագործված հարկային վնասները և փոխհատուցումները:

Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այն չափով, որքանով այլևս հավանական չէ, որ դրան առնչվող հարկային օգուտները կիրացվեն:

### **3.11. Եկամուտների ճանաչում**

Համալսարանը եկամուտը ճանաչում է փուլերով, երբ (կամ այնքանով, որքանով) կատարում է կրթական կամ այլ ծառայությունների մատուցելու իր պարտավորությունները:

Համապատասխանաբար, ծառայություններ մատուցումը (կրթական կամ այլ) նույնպես իրականացվում է փուլերով՝ անկախ Համալսարանի և ծառայությունները ստացողի միջև կնքված պայմանագրի ժամկետից:

#### Հասույթ պայմանագրերից

Համալսարանը, կնքելով ծառայությունների մատուցման պայմանագիրը ծառայությունը ստացողի հետ, ընդունում է, որ ա) պայմանագիրն ունի առետրային բնույթ, բ) հավանական է, որ Համալսարանը կստանա այն հատուցումը, որի իրավունքը ունի ստանալու համաձայն պայմանագրի, գ) ծառայություն ստացողը միաժամանակ ստանում եւ սպառում է Համալսարանի կողմից մատուցված կրթական կամ այլ տեսակի ծառայությունները:

#### Վարձակալությունից եկամուտ

Գործառնական վարձակալությունների գծով ստացված վճարումները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են «այլ եկամուտ» հոդվածում:

#### Տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

### **3.12. Սխալներ**

Որքանով իրագործելի է, Համալսարանը որևէ նախորդ ժամանակաշրջանի էական սխալները ուղղում է հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

- ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդ ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համադրելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ
- բ) վերահաշվարկելով ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները ներկայացված նախորդ ամենավաղ ժամանակաշրջանի համար, եթե սխալը տեղի է ունեցել մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը:

### **3.13. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ**

Համալսարանի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվում է միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

- ա) պահանջվում է ՖՀՄՍ-ներով, կամ
- բ) նպաստում է տնտեսական գործունեության դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը Համալսարանի ֆինանսական հաշվետվություններում:

Երբ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց, Համալսարանը պետք է կիրառի նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը մինչև ամենավաղ իրագործելի ամսաթիվը՝ նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ, կարծես թե հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը ի սկզբանե կիրառվել է:

Երբ Համալսարանի համար անիրագործելի է որոշել ներկայացված մեկ կամ ավելի նախորդ ժամանակաշրջանների համար համադրելի տեղեկատվության վրա կոնկրետ ժամանակաշրջանին վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության հետևանքները, Համալսարանն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների նկատմամբ կիրառում է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը՝ սկսած այն ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից, որը կարող է լինել ընթացիկ ժամանակաշրջանը, որի համար հետընթաց կիրառումն իրագործելի է, ինչպես նաև կատարում է այդ ժամանակաշրջանում սեփական կապիտալի այն հոդվածների սկզբնական մնացորդների համապատասխան ճշգրտումներ, որոնք ազդեցություն են

կրել այդ փոփոխություններից:

### **3.14. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում**

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունը ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի կամ ակտիվի պարբերաբար սպառվող մեծության ճշգրտումն է, որն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ընթացիկ վիճակի և դրանց հետ կապված ակնկալվող ապագա օգուտների և պարտականությունների գնահատումից: Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններն առաջանում են նոր տեղեկատվության ստացման կամ նոր հանգամանքների առաջացման հետևանքով և, հետևաբար, չեն համարվում սխալների ուղղում:

#### Հետևանքի ճանաչման ժամանակաշրջանը

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ճանաչում է առաջընթաց՝ շահույթի կամ վնասի որոշման մեջ.

ա) փոփոխման ժամանակաշրջանում՝ եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է երկուսի վրա էլ:

Բացառություն է կազմում հաշվապահական հաշվառման գնահատման որևէ փոփոխություն, որն առաջացնում է փոփոխություններ ակտիվներում և պարտավորություններում, կամ վերաբերում է սեփական կապիտալի որևէ հոդվածի, որի դեպքում Համալսարանը այն ճանաչում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն:

### **3.15. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր**

Համալսարանը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Համալսարանը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

**4. Հիմնական միջոցներ**

Հազար դրամ

	Շենքեր, շինություններ, կառուցվածք.	Մեքենա-սարքավորումներ	Տրանսպորտ. միջոց-ր	Արտադրատնտեսական գույք	Կենսաբանական ակտիվներ	Այլ ՀՄ	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	Ընդամենը
<b>Արժեք</b>								
<b>Առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>	<b>5,415,486</b>	<b>2,003,995</b>	<b>3,696</b>	<b>410,377</b>	<b>34,661</b>	<b>550,330</b>	<b>21,300</b>	<b>8,439,845</b>
Դուստր ընկերության ապաճանաչում				(65,313)				(65,313)
Ավելացումներ	680	108,456	38,200	92,616		11,730		251,682
Նվազեցումներ		(165,288)		(33,139)	(21,044)	(34,012)		(253,483)
Վերադասակարգումներ	10,477	5,584		(5,146)	(6,970)	(3,488)		457
<b>Առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>5,426,643</b>	<b>1,952,747</b>	<b>41,896</b>	<b>399,395</b>	<b>6,647</b>	<b>524,560</b>	<b>21,300</b>	<b>8,373,188</b>
Ավելացումներ		262,480		28,475		48,485	29,699	369,139
Նվազեցումներ		(8,175)		(9,720)		(9,498)		(27,393)
Վերադասակարգումներ		27,841		(28,023)		182		-
<b>Առ 31 դեկտեմբերի 2025թ.</b>	<b>5,426,643</b>	<b>2,234,893</b>	<b>41,896</b>	<b>390,127</b>	<b>6,647</b>	<b>563,729</b>	<b>50,999</b>	<b>8,714,934</b>
<b>Կուտակված մաշվածություն</b>								
<b>Առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>	<b>2,222,209</b>	<b>1,553,142</b>	<b>3,696</b>	<b>318,532</b>	<b>34,661</b>	<b>372,735</b>	<b>-</b>	<b>4,504,975</b>
Դուստր ընկերության ապաճանաչում				(51,521)				(51,521)
Մաշվածության գումար	202,000	131,732	3,625	24,859		9,606		371,822
Նվազեցումներ		(163,101)		(32,745)	(21,044)	(31,946)		(248,836)
Վերադասակարգումներ	10,477	258		(258)	(6,970)	(3,507)		-
<b>Առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>2,434,686</b>	<b>1,522,031</b>	<b>7,321</b>	<b>258,867</b>	<b>6,647</b>	<b>346,888</b>	<b>-</b>	<b>4,576,440</b>
Մաշվածության գումար	202,026	136,213	3,820	30,853		10,626		383,538
Նվազեցումներ		(8,133)		(9,566)		(5,291)		(22,990)
Վերադասակարգումներ		10,370		(11,527)		1,157		-
<b>Առ 31 դեկտեմբերի 2025թ.</b>	<b>2,636,712</b>	<b>1,660,481</b>	<b>11,141</b>	<b>268,627</b>	<b>6,647</b>	<b>353,380</b>	<b>-</b>	<b>4,936,988</b>
<b>Ընթացիկ արժեք</b>								
<b>Առ 31 դեկտեմբերի 2022թ.</b>	<b>3,394,673</b>	<b>409,767</b>	<b>-</b>	<b>69,876</b>	<b>125</b>	<b>70,971</b>	<b>21,335</b>	<b>3,966,747</b>
<b>Առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>	<b>3,193,277</b>	<b>450,853</b>	<b>-</b>	<b>91,845</b>	<b>-</b>	<b>177,595</b>	<b>21,300</b>	<b>3,934,870</b>
<b>Առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>2,991,957</b>	<b>430,716</b>	<b>34,575</b>	<b>140,528</b>	<b>-</b>	<b>177,672</b>	<b>21,300</b>	<b>3,796,748</b>
<b>Առ 31 դեկտեմբերի 2025թ.</b>	<b>2,789,931</b>	<b>574,412</b>	<b>30,755</b>	<b>121,500</b>	<b>-</b>	<b>210,349</b>	<b>50,999</b>	<b>3,777,946</b>

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Համալսարանը չունի գրավադրված հիմնական միջոցներ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Համալսարանը չունի գրավադրված հիմնական միջոցներ)

Հաշվետու ամսաթվի դրությամբ Համալսարանում առկա են զրո հաշվեկշռային արժեքով հաշվառվող 1,695,033 հազ. դրամ սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցներ



	01.01.2024	Ֆին. արդյունքում ճանաչված	31.12.2024
<b>Հետաձգված հարկային ակտիվ</b>			
Չօգտագործված արձակուրդայինի պահուստ	47,531	1,372	48,903
Հիմնական միջոցներ	20,244	(7,255)	12,989
<b>Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ</b>	<b>67,775</b>	<b>(5,883)</b>	<b>61,892</b>
<b>Հետաձգված հարկային պարտավորություն</b>			
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-
<b>Չուտ հետաձգված հարկային պարտավորություն</b>	<b>67,775</b>	<b>(5,883)</b>	<b>61,892</b>

## 7. Պաշարներ

	<i>Հազար դրամ</i>	
	<b>31.12.2025թ.</b>	<b>31.12.2024թ.</b>
Նյութեր	18,921	10,641
Արագամաշ առարկաներ	8,249	6,474
	<b>27,170</b>	<b>17,115</b>

## 8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	<i>Հազար դրամ</i>	
	<b>31.12.2025թ.</b>	<b>31.12.2024թ.</b>
Առևտրային դեբիտորական պարտքեր	292,617	180,449
Առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստ	(92,083)	(81,794)
Դեբիտորական պարտքեր վարձակալության գծով	5,590	2,517
Տրված կանխավճարներ	16,022	4,352
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	2,860	10,721
Այլ դեբիտորական պարտքեր	7,108	12,832
	<b>232,114</b>	<b>129,077</b>

## 9. Դրամական միջոցներ

	<i>Հազար դրամ</i>	
	<u>31.12.2025թ.</u>	<u>31.12.2024թ.</u>
Դրամարկղ	-	-
Մնացորդներ բանկերում	3,876,496	3,289,858
	<u><b>3,876,496</b></u>	<u><b>3,289,858</b></u>

## 10. Զուտ ակտիվներ

	<u>Կուտակված արդյունք և զուտ ակտիվների այլ տարրեր</u>
	<u>հազար դրամ</u>
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>	<u><b>1,932,558</b></u>
Տարվա շահույթ (վնաս)	300,242
Նախորդ տարիների սխալի ուղղում	(1,415)
Դուստր ընկերության ապաճանաչում	(157,350)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>	<u><b>2,074,035</b></u>
Տարվա շահույթ (վնաս)	890,498
Նախորդ տարիների սխալի ուղղում	(1,713)
Դուստր ընկերության ապաճանաչում	-
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2025թ.</b>	<u><b>2,962,820</b></u>

## 11. Վարկեր և փոխառություններ

	<i>Հազար դրամ</i>	
	<u>31.12.2025թ.</u>	<u>31.12.2024թ.</u>
Փոխառություն	-	30,164
Օվերդրաֆտ	-	-
	<u>-</u>	<u><b>30,164</b></u>
Ընթացիկ	-	19,528
Ոչ ընթացիկ	-	10,636

## 12. Ակտիվներին/Եկամուտներն վերաբերող շնորհներ

Հազար դրամ

### Ակտիվներին վերաբերող շնորհներ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Տարեսկզբի մնացորդ	2,571,974	2,643,444
Ճշգրտում	-	-
Վերադարձ	-	-
Տարվա ընթացքում ստացված	49,536	15,751
Վերադասակարգում	219,197	154,542
Տարվա ընթացքում եկամուտ ճանաչված	(233,859)	(241,763)
Տարեվերջի մնացորդ	<u>2,606,848</u>	<u>2,571,974</u>

### Եկամուտներն վերաբերող շնորհներ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Տարեսկզբի մնացորդ	1,845,551	1,868,668
Տարվա ընթացքում ստացված	2,368,889	2,081,959
Վերադասակարգում	(219,197)	(154,542)
Ճշգրտում		1,012
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից	59	3,323
Վերադարձ	(23,431)	(55,820)
Դեբիտորական պարտքի մարում	(100,961)	(46,019)
Տարվա ընթացքում եկամուտ ճանաչված	(2,476,610)	(1,853,030)
Տարեվերջի մնացորդ	<u>1,394,300</u>	<u>1,845,551</u>

### Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչում	233,859	241,763
Եկամուտներն վերաբերող շնորհներից եկամտի ճանաչում	2,476,610	1,853,030
Անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտներ	47,260	3,563
	<u>2,757,729</u>	<u>2,098,356</u>

### 13. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ

	<u>31.12.2025թ.</u>	<u>31.12.2024թ.</u>
Կարճաժամկետ փոխհատուցումների գծով	24,157	24,009
Ստացված կանխավճարներ	371,332	361,107
Հարկերի գծով (բացառությամբ շահութահարկի)	121,864	110,059
Ընթացիկ պահուստներ	357,347	293,868
Աշխատավարձի գծով	819	39,459
Այլ պարտքեր	25,906	23,958
	<u><b>901,425</b></u>	<u><b>852,460</b></u>

### 14. Այլ եկամուտներ

Հազար դրամ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Վարձակալությունից եկամուտ	34,510	35,447
Վճարովի ծառայություններից եկամուտ	480,538	253,102
Այլ	1,543	2,484
	<u><b>516,591</b></u>	<u><b>291,033</b></u>

### 15. Այլ գործառնական ծախսեր

Հազար դրամ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Գործուղման և ներկայացուցչական ծախս	105,332	86,592
Նյութածախս	91,284	66,855
Արձակուրդի պահուստ	64,793	18,679
Սնունդի ծախս	48,258	28,957
Հիմնական միջոցների սպասարկման ծախսեր	33,808	5,984
Արտարժույթի փոխարկման ծախսեր	22,978	13,512
Անհավաքագրելիության պահուստ	10,377	81,795
Դատական ակտերի գծով պահուստ	-	16,719
Առողջապահության ապահովագրություն	14,419	-
Բանկային և ապահովագրական ծախսեր	4,326	5,158
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	3,375	1,044
Այլ ծախսեր	126,384	133,162
	<u><b>525,334</b></u>	<u><b>458,456</b></u>

## 16. Ֆինանսական եկամուտ, զուտ

Հազար դրամ

	<b>2025թ.</b>	<b>2024թ.</b>
Տոկոսային եկամուտ	299,162	229,314
Ստացված շահաբաժին	-	180,674
Ստացված ծառայության զեղչման հակադարձումից ծախս	(2,000)	(4,943)
	<b>297,162</b>	<b>405,045</b>

## 17. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/վնաս

Հազար դրամ

<u>Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը</u>	<b>2025թ.</b>	<b>2024թ.</b>
Դրամական միջոցներ	22,789	(7,029)
Դեբիտորական պարտքեր	(637)	(939)
Շնորհներ	(63)	(3,323)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(2,647)	2,504
	<b>19,442</b>	<b>(8,787)</b>

## 18. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ

	<b>2025թ.</b>	<b>2024թ.</b>
Ընթացիկ հարկ	211,686	23,576
Հետաձգված հարկ	(4,412)	5,883
Դուստր ընկերության ապաճանաչում	-	(1,990)
	<b>207,274</b>	<b>27,468</b>

	<b>2025թ.</b>	<b>2024թ.</b>
Տարեսկզբի մնացորդ	(15,797)	36,389
Վճարում	211,686	23,576
Տարվա ընթացիկ ծախս	(11,215)	(75,762)
Տարեվերջի մնացորդ	<b>184,674</b>	<b>(15,797)</b>

**Շահութահարկի արդյունավետ դրույքի համադրում**

	<u>2025թ.</u>	<u>%</u>	<u>2024թ.</u>	<u>%</u>
Շահույթ մինչև հարկումը	1,097,772		327,710	
Շահութահարկի հաշվարկ սահմանված հարկային դրույքով	197,599	18.00	58,988	18.00
(Չհարկվող եկամուտների)/Չնվազեցվող ծախսերի հարկային հետևանքը, զուտ	<u>9,675</u>	<u>0.88</u>	<u>(31,519)</u>	<u>-9.62</u>
<b>Շահութահարկի գծով ծախսը և հարկի արդյունավետ դրույքը</b>	<b><u>207,274</u></b>	<b>18.88</b>	<b><u>27,468</u></b>	<b>8.38</b>

**19. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

Համալսարանը իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Համալսարանի ղեկավարությունը հավատացած է, որ հիմնական միջոցների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Համալսարանի ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

Դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը

Դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը կազմում է մինչև 365 օրացուցային օր, որից հետո միայն Համալսարանը սկսում է հաշվել անհավաքագրելիության պահուստ:

Հետաձգված հարկի գնահատում

Համալսարանի ղեկավարությունը հավատացած է, որ Համալսարանը ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Համալսարանը ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

**20. Ֆինանսական գործիքներ**Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության, և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն թիվ 3.7-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

	<u>31.12.2025թ.</u> հազար դրամ	<u>31.12.2024թ.</u> հազար դրամ
<b>Ամորտիզացված արժեքով չափվող Ֆինանսական ակտիվներ</b>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	232,114	129,077
Դրամական միջոցներ	3,876,496	3,289,858
	<b>4,108,610</b>	<b>3,418,935</b>
<b>Ամորտիզացված արժեքով չափվող Ֆինանսական պարտավորություններ</b>		
Վարկեր և փոխառություններ	-	30,164
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	901,425	852,460
	<b>901,425</b>	<b>882,624</b>

## 21. Ֆինանսական ռիսկերի կառավարում

### Շուկայական ռիսկ

#### *Արժույթային ռիսկն*

Արժույթային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով:

Քանի որ Համալսարանը գործում է Հայաստանի Հանրապետության տարածքում, անհրաժեշտություն է առաջանում ձևավորել կայուն քաղաքականություն ՌԴ դաշնային բյուջեից ուրվով ստացված միջոցների հաշվառման համար: Որպես ռուս-ազգային Համալսարան՝ Համալսարանը ղեկավարվում է ռուսական օրենքներով և կանոնակարգերով, որոնք չեն հակասում ազգային հաշվապահական օրենքներին: Դրամաշնորհների գծով ծախսերի հաշվառման համար արտարժույթի փոխարժեք ընտրելիս Համալսարանը առաջնորդվում է հանրային հատվածի համար «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների կազմակերպությունների ազդեցությունը» հաշվառման դաշնային ստանդարտով, որը հաստատվել է Ռուսաստանի Դաշնության Ֆինանսների նախարարության N122 առ 30.05.2018թ. հրամանով, որը սահմանում է արտարժույթով դրամական ակտիվների համար ընդունելի փոխարժեքներ (Ստանդարտի III և IV մասեր), ՖՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը»-ով, ինչպես նաև Համալսարանի գիտական խորհրդի որոշումներով:

Համալսարանը ունի արտարժույթով գնանշված հետևյալ ֆինանսական գործիքները

	<i>USD</i>		<i>EUR</i>		<i>RUR</i>	
	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
<b>Ֆինանսական ակտիվներ</b>	<b>72,289</b>	<b>44,624</b>	<b>25,191</b>	<b>43,676</b>	<b>10,717</b>	<b>21,030</b>
Առևտրային դեբիտորական պարտքեր	72,289		25,189			
Դրամական միջոցներ	-	44,624	2	43,676	10,717	21,030
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>	<b>77</b>	<b>77</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>243</b>	<b>-</b>
Վարկեր և փոխառություններ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	77	77			243	
<b>Զուտ արդյունք</b>	<b>72,212</b>	<b>44,547</b>	<b>25,191</b>	<b>43,676</b>	<b>10,474</b>	<b>21,030</b>

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Համալսարանի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

Հազար դրամ	USD ազդեցություն		EUR ազդեցություն		RUR ազդեցություն	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	7,221	4,455	2,519	4,368	1,047	2,103

### *Տոկոսադրույքային ռիսկ*

Տոկոսադրույքային ռիսկը այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Հաշվետու ամսաթվով Հիմնադրամը չունի ստացված կամ տրված փոխառություններ, կամ այլ ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ, որոնք հակված են տոկոսադրույքային ռիսկի:

### *Այլ գնային ռիսկ*

Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժույթային ռիսկից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց հաշվեկշռային արժեքից:

### **Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, դեբիտոր գործընկերների կողմից Հիմնադրամի նկատմամբ իրենց պարտավորությունների չկատարելու արդյունքում, Հիմնադրամը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Պարտքային ռիսկը առաջանում է բանկային մնացորդներից, առևտրային դեբիտորական պարտքերից: Հիմնադրամը լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 3 տարի:

### **Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Համալսարանը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Համալսարանի մոտեցումն է՝ որքան հնարավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում, առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

## **22. Կապիտալի կառավարում**

Համալսարանը իր կապիտալը կառավարում է, ապահովելու համար Համալսարանի շարունակական գործունեությունը և սեփականատիրոջ շահույթը:

Համալսարանի կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը, պահուստային կապիտալը և կուտակված շահույթը):

Համալսարանը չունի կապիտալի արտաքին ներգործության պահանջներ:

**Ֆինանսական կախվածության գործակից**

Ֆինանսական կախվածության գործակիցները 31.12.2025թ. և 31.12.2024թ. դրությամբ կազմում են.

	<u>31.12.2025թ.</u>	<u>31.12.2024թ.</u>
	հազար դրամ	հազար դրամ
Ֆինանսական պարտավորություններ	-	19,528
Այլ ընթացիկ պարտավորություններ	2,480,399	2,698,011
Ընդամենը փոխառու միջոցներ	<b>2,480,399</b>	<b>2,717,539</b>
Սեփական կապիտալ	<b>2,962,820</b>	<b>2,074,035</b>
<b>Ֆինանսական կախվածության գործակից</b>	<b>84%</b>	<b>131%</b>

**23. Պայմանական դեպքեր**

**Ապահովագրություն**

Ապահովագրությունը Հայաստանի Հանրապետությունում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրական շատ ձևեր դեռ հասանելի չեն: Համալսարանը ապահովագրված չէ գործունեության ընդհատման կամ էական կրճատման, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված գույքային, բնապահպանական կամ առողջության վնասների հետ հնարավոր միջադեպերի արդյունքում, բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով առաջացած վնասների: Քանի դեռ Համալսարանը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Համալսարանի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

**Հարկեր**

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր մեկնաբանությունների առարկա են:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները:

**Դատական հայցեր**

2025թ. դեկտեմբերի 31-ի և այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Համալսարանի դեմ հարուցված դատական հայցերի բավարարումը էական ազդեցություն չի ունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Համալսարանը պահուստավորում է դատական ակտերով բավարարված հայցերի գումարները՝ նույնիսկ եթե դրանք գտնվում են բողոքարկման փուլում:

**24. Գործարքներ կապակցված կողմերի հետ**

**Կապակցված կողմերի բացահայտում**

Համալսարանի կապակցված կողմերն են ՌԴ և ՀՀ կառավարությունները՝ ի դեմս ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, և առանցքային կառավարչական անձնակազմը:

**Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ**

Հաշվետու ժամանակաշրջանում Համալսարանի առանցքային կառավարչական անձնակազմին (ռեկտոր, պրոռեկտորներ, գլխավոր հաշվապահ) տրված հատուցումները հետևյալն են.

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	133 450	68 153
Չօգտագործված արձակուրդայինների պահուստ	123 978	63 840

**Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ**

2025թ. ընթացքում ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարարությունից Համալսարանը տարբեր ծրագրերի իրականացման համար ստացել է 1,617,403 հազ. դրամի, իսկ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից՝ 683,866 հազ. դրամի ֆինանսավորում: